

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**ԶԱՎԵՆ ՇՄԱՎՈՆԻ ՄԿՐՏՁՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏՆՏԵՍԱ-  
ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

**ՍԵՂՄԱԳԻՐ**

**Ը. 00.02. - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

**ԵՐԵՎԱՆ - 2021**

**Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանում**

- Գիտական ղեկավար՝** տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր  
**Մարկոսյան Աշոտ Խաչատուրի**
- Պաշտոնական ընդդիմախոսներ՝** տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր  
**Մելքումյան Միքայել Սերգեյի**
- տնտեսագիտության թեկնածու, դոցենտ  
**Սարգսյան Սոնա Հայկի**
- Առաջատար կազմակերպություն՝** ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան  
տնտեսագիտության ինստիտուտ


Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2021 թ. հուլիսի 9-ին, ժամը 13:30-ին, Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի տնտեսագիտության թիվ 015 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցե՝ 0009, ք. Երևան, Աբովյան փող. 52

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2021 թ. մայիսի 25-ին:

015 Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,  
Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ՝

 Ա.Ա. Խաչատրյան

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**Ատենախոսության թեմայի արդիականությունը:** Երկրների սոցիալ-տնտեսական զարգացման հիմքում ընկած են արտադրության գործոնները՝ բնական ռեսուրսները, աշխատուժը, կապիտալը և ձեռնարկատիրական հմտությունները, որոնց օգտագործման միջոցով ձևավորվում են ազգային տնտեսություններն ու մտնում են ապրանքա-դրամական հարաբերությունների մեջ: Եվ քանի որ յուրաքանչյուր երկիր արտադրության այս կամ այն գործոնից ունի շատ կամ քիչ և դրանք օգտագործում է արդյունավետության տարբեր աստիճաններով, երկրների միջև առաջանում են բացարձակ և հարաբերական առավելություններ, որոնք էլ ընկած են համաշխարհային առևտրի հիմքում: Դրա հիման վրա որոշվում է այս կամ այն երկրի տեղը համաշխարհային առևտրի կառուցվածքում: Թեև զարգացմանը համընթաց աստիճանաբար և համեմատական կարգով նվազում է բնական ռեսուրսների նշանակությունը և դերը բարիքների արտադրության գործում, այնուհանդերձ դրանք այժմ էլ շարունակում են մնալ առանձին երկրների (հիմնականում զարգացող) առաջընթացը մեծապես պայմանավորող կարևոր գործոն և բնակչության կենսամակարդակի բարձրացման առաջնահերթ պայման:

Այս տեսանկյունից բացառություն չէ նաև Հայաստանի Հանրապետությունը, որի տնտեսական համալիրի անբաժանելի մասն են կազմում հանքագործական արդյունաբերությունը և դրան հարակից տնտեսական գործունեության տեսակները: Բավական է նշել, որ եթե 2019թ.-ին 1997թ.-ի համեմատությամբ հանրապետության արդյունաբերական արտադրանքի ծավալն ավելացել է 8.2 անգամ, ապա հանքագործական արդյունաբերությանը՝ ավելի քան 40 անգամ, ինչի հետևանքով մեկ բնակչի հաշվով հոմքի արտադրությունը ՀՀ-ում 2.2 անգամ ավելի բարձր է աշխարհի միջին ցուցանիշից: Հանքագործական արդյունաբերությունը ունի կարևոր սոցիալ-տնտեսական նշանակություն. ոլորտի բաժինը հանրապետության ՀՆԱ-ում 2020թ.-ին կազմել է 6.5%, 1000 ամենախոշոր հարկատուների ցանկում ընդգրկված կազմակերպությունների կողմից վճարված պետական բյուջեի մուտքերում՝ 8.0%, իսկ արտահանման կառուցվածքում տեսակարար կշիռը կազմել է 32.5% (վերջինիս 99%-ը բաժին է ընկնում մետաղական հանքանյութի արտադրանքին), որը 2020թ. ՀՀ արտահանման ամենամեծ ապրանքային խումբն է:

Ոլորտում տեղ գտած հիմնախնդիրների շարքում կարևոր է դառնում այն հանգամանքը, որ համաձայն Համաշխարհային բանկի մասնագետների կողմից կատարված վերջին գնահատումների (2018թ.) ՀՀ հանքարդյունաբերության ոլորտի հանքային ռենտայի մեծությունը կազմել է ՀՀ ՀՆԱ-ի 6.3%-ը<sup>1</sup>, մինչդեռ ՀՀ պաշտոնական վիճակագրության տվյալների համաձայն տնտեսական շրջանառության մեջ հաշվարկվել է նշված մեծության միայն 2.8%-ը, այսինքն՝ հանքային ռենտայի մեծ մասը ընդերքի սեփականատերը չի տնօրինել:

---

<sup>1</sup> Տե՛ս Համաշխարհային բանկի տվյալների բազաների Mineral rents (% of GDP) հաւովածը, հասանելի է 27.03.2021թ. դրությամբ հետևյալ հղմամբ՝ <https://data.worldbank.org/indicator/NY.GDP.MINR.RT.ZS>

Զարգացման ներկայիս պայմաններում առաջնահերթ է դառնում հանքագործական արդյունաբերությունում ձևավորվող հանքային ռենտայի մեծության հաշվարկը, ինչպես նաև պետության՝ որպես ընդերքի սեփականատիրոջ և ընդերքօգտագործող կազմակերպությունների միջև հանքային ռենտայի բաշխման հիմնախնդիրը:

Սակայն, հատկապես վերջին տարիներին նկատվող հանքագործական արդյունաբերության բուռն զարգացումը, առանձնապես մետաղային օգտակար հանածոների արդյունահանումը, իր հետ բերում է նաև անցանկալի հետևանքներ, որոնցից ամենակարևորը էկոլոգիականն (բնապահպանականը) է:

Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման գործում, ինչպես ներկայումս, այնպես էլ առաջիկա տարիներին, կարևոր նշանակություն և դերակատարում են ձեռք բերում ընդերքի այն ռեսուրսները, որոնք հատկապես արտահանվում են համաշխարհային շուկա և ունեն բարձր արժեք: Ինչպես ցույց է տալիս բազմաթիվ զարգացող երկրների, այդ թվում նաև Հայաստանի Հանրապետության ընդերքօգտագործող ընկերությունների գործունեության տնտեսական ցուցանիշների ուսումնասիրությունը և արդյունքների վերլուծությունը, ներկայումս առկա են մի շարք հիմնախնդիրներ, որոնք այս կամ այն չափով խոչընդոտում են ոլորտում ձևավորված ավելացված արժեքի բաշխմանը:

Վերը թվարկվածով է պայմանավորված ատենախոսության թեմայի արդիականությունը:

**Հետազոտության օբյեկտը և առարկան:** Հետազոտության օբյեկտը Հայաստանի Հանրապետության հանքագործական արդյունաբերությունն է, իսկ ուսումնասիրության առարկան՝ հանքահումքային ռեսուրսների և հատկապես՝ մետաղական հանքավայրերի, հանքագործական արդյունաբերության ընկերությունների գործունեության կառավարման արդյունավետության բարձրացման հետ կապված հարաբերությունները:

**Հետազոտության նպատակը և հիմնախնդիրները:** Հետազոտության նպատակն է իրականացնել Հայաստանի Հանրապետության հանքագործական արդյունաբերության հումքային բազայի օգտագործման և տնտեսա-էկոլոգիական գործիքակազմի ուսումնասիրություն, գնահատել մետաղական հանքավայրերի ընդերքօգտագործման հիմնախնդիրները և բացահայտել ոլորտի կառավարման արդյունավետության բարձրացման ուղիները:

Նշված նպատակին հասնելու համար ատենախոսությունում դրվել և լուծվել են հետևյալ հիմնախնդիրները՝

- ուսումնասիրել հանքային ռենտայի տնտեսագիտական բովանդակությունը և դրա գնահատման միջազգային ցուցանիշները,
- բացահայտել հանքագործական արդյունաբերության ներդրումային գրավչության վրա ազդող գործոնները,
- գնահատել հանքագործական արդյունաբերության էկոլոգիական և սոցիալական ազդեցությունները ու դրանց կարգավորման տնտեսական կառուցակարգերը,

➤ ուսումնասիրել հանքագործական արդյունաբերության զարգացման հումքային բազան և օգտագործման վիճակը,

➤ ուսումնասիրել ՀՀ հանքագործական արդյունաբերության զարգացումը բնութագրող հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխման միտումները,

➤ գնահատել Հայաստանի Հանրապետությունում հանքագործական արդյունաբերության զարգացման սոցիալական ու էկոլոգիական ռիսկերը,

➤ ուսումնասիրել հանքարդյունաբերության ոլորտում բնական ռեսուրսների օգտագործման համար ռոյալթիների կամ վճարների հաշվարկման մեթոդաբանությունը,

➤ ներկայացնել Հայաստանի Հանրապետության հանքագործական արդյունաբերության ոլորտում հանքային ռենտայի ձևավորումը և դրա հաշվարկը,

➤ մշակել հանքագործական արդյունաբերության ոլորտում հանքային ռենտայի ձևավորման և հարկազանձման բարելավման ուղիները:

**Հետազոտության տեսա-մեթոդական և տեղեկատվական հիմքերը:** Ատենախոսության համար տեսական հիմք են հանդիսացել ընդերքօգտագործման և հանքագործական արդյունաբերության կառավարման, տնտեսա-էկոլոգիական հիմնախնդիրների վերաբերյալ հայրենական և արտասահմանյան հետազոտողների կողմից կատարված վերլուծությունները, հրապարակումները, հետազոտությունները, ինչպես նաև գիտա-գործնական նշանակություն ունեցող հիմնադրույթները:

Ուսումնասիրության համար անհրաժեշտ տեղեկատվական հիմք են հանդիսացել ՀՀ օրենքները, մյուս իրավական ակտերը, գերատեսչական նորմատիվային ակտերը, մշակումները, ՀՀ Վիճակագրական կոմիտեի, պետական կառավարման մարմինների պաշտոնական տվյալներն ու հրապարակումները, Համաշխարհային բանկի, Համաշխարհային հանքագործության տվյալները (World Mining Data), միջազգային մասնագիտացված այլ կազմակերպությունների զեկույցները, հաշվետվություններն ու պաշտոնական հրապարակումները (վիճակագրությունը):

Հետազոտության ընթացքում կիրառվել են վիճակագրական, համեմատական, խմբավորումների և վերլուծության ու ամփոփումների մեթոդները:

**Հետազոտության հիմնական գիտական արդյունքները և նորույթը:** Հետազոտության արդյունքում ստացվել են գիտա-գործնական նշանակության արդյունքներ, որոնց գիտական նորույթը կայանում է հետևյալում՝

1. Վիճարկվել է այն տարածված տեսակետը, ըստ որի Հայաստանի Հանրապետությունը աղքատ է հանքահումքային ռեսուրսներով և չունի զարգացման հեռանկարներ, միևնույն ժամանակ հիմնավորվել է որ առաջիկա տարիներին ՀՀ տնտեսական աճի գործոնների շարքում հանքագործական արդյունաբերությունը շարունակելու է ունենալ կարևոր դերակատարում:

2. Բացահայտվել է, որ հանքագործական արդյունաբերության զարգացման տեմպերը, արտահանման ու ներմուծման ծավալները կախվածության մեջ չեն գտնվել հանրապետության «տնտեսական շրջափակման», ինչպես նաև COVID-19-ով պայմանավորված սահմանափակումներից:

3. Հաշվարկվել է ՀՀ հանքարդյունաբերության ոլորտում մետաղական օգտակար հանածոների օգտագործման ռոյալթիների իրական մեծությունը, ինչի արդյունքում պարզվել է, որ ընդերքի սեփականատերը՝ Հայաստանի Հանրապետությունը ստանում է դրա փոքր մասը:

4. Բացահայտվել են հանքագործական արդյունաբերության ոլորտում հանքային ռենտայի ձևավորման և հարկազանձման բարելավման հնարավոր ուղիները և ներկայացվել են հանքային ռենտայի կառավարման կատարելագործման ուղղությունները, ինչն իր հերթին կունենա տնտեսա-էկոլոգիական դրական ազդեցություն:

**Հետազոտության արդյունքների գիտա-գործնական նշանակությունը և օգտագործումը:** Իրականացված վերլուծություններից բխող առաջարկությունները, ինչպես նաև ընդերքօգտագործման և հանքահումքային ռեսուրսների կառավարման բարելավման հիմնախնդիրների լուծման համար առաջարկված մոտեցումներն ու սկզբունքները կարող են օգտագործվել ՀՀ օրենսդիր և գործադիր մարմինների կողմից՝ ընդերքօգտագործման և հանքահումքային ռեսուրսների կառավարման արդյունավետության բարձրացման, ինչպես նաև ընդերքօգտագործման և այլ շահագործող կազմակերպությունների հարկազանձման բարելավման նպատակով: Դրանք կարող են նաև օգտակար լինել հանքագործական արդյունաբերության ոլորտում ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտների համար, ինչի արդյունքում կապահովվի ոլորտում ստեղծված հանքային ռենտայի բաշխումը ընդերքի սեփականատիրոջ (Հայաստանի Հանրապետության), ազդակիր համայնքների և ընդերքօգտագործող ընկերությունների միջև:

**Ատենախոսության արդյունքների փորձարկումը և հրապարակումները:** Ատենախոսության հիմնադրույթները և ստացված արդյունքները քննարկվել են Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանում, ինչպես նաև 2020թ.-ի հոկտեմբերի 29-ին ք.Մինսկում (Բելառուսի Հանրապետություն) կայացած «Հանքահումքային համալիր. ինժեներական և տնտեսագիտական լուծումներ» XVII միջազգային գիտագործնական համաժողովի ընթացքում: Ատենախոսության հիմնական արդյունքներն ու բովանդակությունը արտացոլված են հեղինակի կողմից հրապարակված 7 (յոթ) գիտական հոդվածներում:

**Ատենախոսության կառուցվածքը և ծավալը:** Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունների բաժնից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Ատենախոսության տեքստը շարադրված է 157 էջի վրա՝ ներառյալ օգտագործված գրականության ցանկը, առանց հավելվածների:

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

**Ներածությունում** հիմնավորված է թեմայի արդիականությունը, ձևակերպված են հետազոտության նպատակն ու հիմնախնդիրները, տրված են առարկան և օբյեկտը, ներկայացված են ուսումնասիրության հիմնական

արդյունքներն ու գիտական նորույթը, դրանց գիտա-գործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ «Հանքարդյունաբերության (հանքագործական արդյունաբերության) տնտեսա-էկոլոգիական հիմնահարցերը և զարգացման ժամանակակից միտումները» գլխում ուսումնասիրվել են հանքային ռենտայի սահմանման և գնահատման մեթոդաբանության, հանքագործական արդյունաբերության ներդրումային գրավչության հիմնախնդիրները, հանքային ռենտայի միջազգային ցուցանիշները, ինչպես նաև այդ ցուցանիշների դրսևորման առանձնահատկությունները տարբեր երկրներում: Ատենախոսության այս գլխում դիտարկվել են հանքագործական արդյունաբերության էկոլոգիական և սոցիալական ազդեցություններն ու դրանց կարգավորման տնտեսական կառուցակարգերը և մասնավորապես, քաղաքականության մեջ լայնորեն կիրառվող լուծումները:

Անդրադառնալով ռենտայի հասկացությանը, հեղինակը դիտարկել է Դ.Ռիկարդոյի սահմանումները, մասնավորապես ըստ որի այն հավելյալ շահույթն է, որն առաջանում է հողամասերում շարունակաբար կատարվող ներդրումների արդյունքում<sup>2</sup>: Տնտեսական ռենտայի ժամանակակից մեկնաբանություններից ատենախոսությունում անդրադարձ է կատարվել Նոբելյան մրցանակակիր Ջոզեֆ Ստիգլիցի սահմանմանը, ըստ որի. «Ռենտան յուրաքանչյուր եկամուտն է, որը տարբերվում է աշխատանքի վարձատրությունից և կապիտալ ներդրումներից ստացվող եկամուտներից»<sup>3</sup>: Որպես ռենտայի օրինակներ Ջ.Ստիգլիցը նշում է բնական ռեսուրսների օգտագործումից ստացվող եկամուտները, մենաշնորհային եկամուտները և մտավոր սեփականության օգտագործումից ստացվող եկամուտները: Ի տարբերություն աշխատանքային ռեսուրսների սեփականատերերի, ռենտա առաջացնող ակտիվների (հողի, օգտակար հանածոների կամ այլ նմանատիպ ակտիվի) սեփականատերերը եկամուտներ են ստանում միայն այն բանի համար, որ նրանք տիրապետում են այդ ակտիվները<sup>4</sup>:

Տնտեսագետների կողմից առանձնացվող ռենտայի տեսակներից (հողի ռենտա, ֆինանսական ռենտա, բնօգտագործման ռենտա, պետական ռենտա, մենաշնորհային ռենտա) հեղինակն առանձնացրել է բնօգտագործման ռենտան, որի ձևավորումը և ստացումը պայմանավորված է ընդերքօգտագործողների մի մասի համար առավել բարենպաստ պայմաններով: Այդպիսի առավելություններն ի հայտ են գալիս, օրինակ ավելի լավ լեռնահանքային և երկրաբանական բնութագրերով բնական ռեսուրսների հանքավայրերի հայտնաբերման, հետախուզման և արդյունահանման, հանքավայրերի բարձր արտադրողականության, դրանց տեղակայման, կլիմայական ավելի լավ

<sup>2</sup> Николайчук О. А. Земельная рента — реальная или ложная социальная стоимость, [https://www.nifi.ru/images/FILES/Journal/Archive/2011/2/statii/2011\\_02\\_03.pdf](https://www.nifi.ru/images/FILES/Journal/Archive/2011/2/statii/2011_02_03.pdf)

<sup>3</sup> Стиглиц Д.Ю. Люди, власть и прибыль. Прогрессивный капитализм в эпоху массового недовольства //пер. Вячеслав Ионов; научный редактор Николай Злобин. — электронная книга: «Альпина Диджитал», 2019, с. 56-57.

<sup>4</sup> Նույն տեղում:

պայմանների, հողի ավելի բարձր բնական բերքատվության և այլ արտոնությունների առկայության հաշվին<sup>5</sup>:

Դիտարկելով բնօգտագործման ռենտան, հավելյալ եկամուտների ստացումը դասակարգվել է ըստ հետևյալ աղբյուրների՝ (1) ռեսուրսների ծագման, (2) տնտեսական օգտագործման տեսակների, (3) սպառման ձևերի<sup>6</sup>:

Համաշխարհային բանկի կողմից երկրների տնտեսությունների զարգացման հիմնական ցուցանիշների շարքում (World Development Indicators) հաշվարկվում է նաև հանքային ռենտան (Mineral rent)՝ որպես արդյունահանված մի խումբ հանքանյութերի (անագ, ոսկի, կապար, ցինկ, երկաթ, պղինձ, նիկել, արծաթ, բորքսիտ և ֆոսֆատ) համաշխարհային գներով արտադրության արժեքի և դրանց արտադրության ընդհանուր ծախսերի միջև տարբերություն<sup>7</sup>:

Աշխարհի գրեթե բոլոր երկրների համար հաշվարկվող հանքային ռենտայի ցուցանիշները նպատակ ունեն ցույց տալ բնական ռեսուրսների ներդրումը (ավանդը) երկրի արդյունաբերական արտադրանքի մեջ, իսկ հաշվարկի մեթոդաբանությունը սահմանված է ազգերի հարստությունը բնութագրող զեկույցում<sup>8</sup>, որտեղ բնական ռեսուրսները դիտարկվում են որպես ազգային հարստության բաղադրիչներից մեկը և ընդունված մեթոդաբանությամբ գնահատումից (հաշվարկումից) հետո ներառվում են երկրի ազգային հարստության կազմում<sup>9</sup>:

Առանձին երկրներում բնական ռեսուրսներից, հատկապես հանածո վառելիքներից և օգտակար հանածոներից ստացվող եկամուտները ՀՆԱ-ի զգալի մասն են կազմում, և այդ եկամուտների մեծ մասը ձևավորվում է տնտեսական ռենտայի տեսքով՝ եկամուտներ, որոնք գերազանցում են ռեսուրսների արդյունահանման ծախսերը: Համաշխարհային բանկի մասնագետների կողմից կատարված հաշվարկների համաձայն ՀՀ հանքային ռենտայի մեծությունը՝ %-ով ՀՆԱ-ի նկատմամբ կազմել է. 1992թ.՝ 0.11, 1995թ.՝ 0.73, 2000թ.՝ 0.34, 2005թ.՝ 0.89, 2010թ.՝ 2.69, 2014թ.՝ 3.15, 2015թ.՝ 3.75, 2016թ.՝ 4.35, 2017թ.՝ 5.7 և 2018թ.՝ 6.32%<sup>10</sup>:

<sup>5</sup> Голуб А.А., Струкова Е.Б. Экономика природных ресурсов, М.: Аспект Пресс, 2001, էջ 13:

<sup>6</sup> Иванченкова Л.В., Природная рента и экологический налог, “ЕКОНОМІКА ХАРЧОВОЇ ПРОМИСЛОВОСТІ” № 1(17), 2013, с. 68-69, Ахатов А.Г. Ресурсы нефти и газа России на рубеже веков (экономические и эколого-экономические аспекты) / А.Г. Ахатов, А.А. Ильинский. - М. : Недра, 1998. - 432 с.

<sup>7</sup> St'u Index mundi, Mineral rents (% of GDP), էլեկտրոնային ռեսուրսը հասանելի է 10.03.2021թ. դրությամբ <https://www.indexmundi.com/facts/indicators/NY.GDP.MINR.RT.ZS> հղմամբ:

<sup>8</sup> The Changing Wealth of Nations. Measuring Sustainable Development in the New Millennium, Word Bank, 2011, էջ 145-146, հղումը՝ <https://towardfreedom.org/wp-content/uploads/2014/05/ChangingWealthNations.pdf> (էլեկտրոնային ռեսուրսը հասանելի է 05.03.2021թ. դրությամբ):

<sup>9</sup> The Changing Wealth of Nations 2018. Building a Sustainable Future, The Word Bank Group, 2018, էջ 4, հղումը՝ <https://openknowledge.worldbank.org/bitstream/handle/10986/29001/9781464810466.pdf?sequence=4&isAllowed=y> (էլեկտրոնային ռեսուրսը հասանելի է 05.03.2021թ. դրությամբ):

<sup>10</sup> Աղբյուրը՝ Համաշխարհային բանկի տվյալների բազաներում ներառված ցուցանիշները, տե՛ս 2021թ.-ի մարտի 10-ի դրությամբ հասանելի <https://data.worldbank.org/indicator/NY.GDP.MINR.RT.ZS> էլեկտրոնային ռեսուրսը:



Որքանո՞վ է հանքային ռենտայի աճը փոխկապակցված երկրի ՀՆԱ-ի աճի կամ նվազման, ինչպես նաև հարկային եկամուտների ավելացման հետ: Այս հարցի պատասխանը ստանալու և մեկնաբանություններ կատարելու համար ուսումնասիրվել են ՀՀ ՀՆԱ-ի և հանքային ռենտայի ցուցանիշների հավելաճերի հիման վրա հաշվարկվող համեմատական արդյունավետության գործակիցները, ինչպես նաև հանքային ռենտայի և հարկեր/ՀՆԱ-ի ցուցանիշների հավելաճերի համեմատական արդյունավետության գործակիցները 1995-2018թթ. ժամանակահատվածի համար: Ռիսումնասիրության արդյունքները վկայում են այդպիսի կապի բացակայության կամ թույլ արտահայտված լինելու մասին:

Հեղինակը գտնում է, որ հանքային ռենտայի հաշվարկումը կարևոր է տնտեսական արդյունքի (արտադրության) մեջ բնական ռեսուրսների ներդրման չափերի որոշման, ինչպես նաև երկրների և առանձին տարածաշրջանների կայուն զարգացման վերլուծական դաշտի ստեղծման ու հեռանկարային ծրագրերի մշակման տեսանկյունից: Ընդ որում, զարգացած կամ բարձր շնչային եկամուտներով երկրներում հանքահումքային ռեսուրսների արդյունահանման հաշվին ստացվող հանքային ռենտայի ցուցանիշներն էական չեն այդ երկրների տնտեսական զարգացման ցուցանիշների բարելավման տեսանկյունից, քանի որ հումքային կցորդ հանդիսացող թույլ զարգացած երկրների, ինչպես նաև նոր շուկաներ հանդիսացող՝ զարգացող երկրների հանքահումքային ռեսուրսների օգտագործման հաշվին առաջինները յուրացնում են մյուս երկրներում ձևավորված հանքային ռենտան:

Վերջին տարիների մտահոգիչ համաշխարհային միտումները պայմանավորված են երեք միախառնված գործոններով. ա) տնտեսական գործոններ, ներառյալ ՕՈՒՆ-ներից սպասվող եկամտաբերության մակարդակի նվազումը, բ) բիզնես գործոններ, ներառյալ թվային տեխնոլոգիաների ներդրումը և միջազգային արտադրության կազմակերպման աճող բազմազանությունը և գ) քաղաքականության գործոնները, ներառյալ ներդրողների վստահության աստիճանի նվազումը<sup>11</sup>:

Բացի վերը նշված՝ ներդրումային հոսքերի փոփոխման ընդհանուր միտումներից հանքագործական արդյունաբերությանը բնորոշ են մի շարք առանձնահատկություններ, որոնք յուրահատուկ են դարձնում այդ ոլորտում կատարվող ներդրումներն ու դրանց ձևավորման կառուցվածքը: Մասնավորապես, այս ոլորտի ներդրումային գրավչության վրա մշտապես ազդել և շարունակում են ազդեցություն ունենալ այնպիսի գործոններ, ինչպիսիք են՝ պետության կողմից վարվող քաղաքականության անորոշությունը, սեփականության իրավունքների ոչ հստակ սահմանումը և գործունեության վերջնական արդյունքների համար պատասխանատվության կառուցակարգերի անկատարությունը, կապիտալի շուկայի

---

<sup>11</sup> St'eu Global Investment Competitiveness Report 2019/2020. Rebuilding Investor Confidence in Times of Uncertainty, International Bank for Reconstruction and Development / The World Bank, 2020, p. 3. Հղումը՝ <https://openknowledge.worldbank.org/bitstream/handle/10986/33808/9781464815362.pdf?sequence=4&isAllowed=y> (էլեկտրոնային ռեսուրսը առկա է 17.11.2020թ. դրությամբ):

ու դրա ենթակառուցվածքների թերզարգացվածությունը<sup>12</sup>, ֆինանսական կարգապահության ցածր մակարդակը, ինչպես նաև շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման դժվարությունները և համապատասխան պատասխանատվության նորմերի կիրառման ցածր արդյունավետությունը:

Հայաստանի հանքագործական արդյունաբերությունը, այս ոլորտի զարգացումը և տարածաշրջանային համագործակցությունը, պետության կարգավորման արդյունավետությունն ու ներդրումային միջավայրի ձևավորումը, արտահանումից ստացվող մուտքերի ավելացումը մեծապես պայմանավորված են համաշխարհային շուկայում հանքահումքային արտադրանքի շուրջ տնտեսական հարաբերությունների յուրահատկություններով, որոնց իմացությունը և դրանք տնտեսական քաղաքականության մեջ կիրառումը կնպաստեն հանքագործական արդյունաբերության արդյունավետության բարձրացմանը, իսկ ստացված արդյունքները կօգտագործվեն հանրային կարիքների և հատկապես բնակչության կենսամակարդակի բարձրացման համար:

Հանքագործական արդյունաբերության ոլորտում օտարերկրյա ներդրումների համար կարևոր են ինչպես ընդհանուր մակրոտնտեսական միջավայրը և ռիսկերի բարձր մակարդակը, այնպես էլ հանքարդյունաբերության ոլորտին բնորոշ մի շարք բացասական գործոններ, ինչպիսիք են՝ վերջինիս հագեցվածությունը, նոր գործունեություն սկսելու հետ կապված մեծածավալ կապիտալ ծախսերի անհրաժեշտությունը, վերջնական արտադրանքի թողարկման արտադրական շղթայի բացակայությունը<sup>13</sup>:

Այնուամենայնիվ, ատենախոսությունում կատարված ուսումնասիրությունը վկայում է ՀՀ ամբողջ տնտեսության համեմատությամբ հանքագործական արդյունաբերության ոլորտի ներդրումային գրավչության էական ավելացման մասին: Այս հանգամանքը կարող է բացատրվել հանքագործական արդյունաբերությունում սովորաբար բարձր մակարդակով կամ էլ ոլորտում հարկազանձման կառուցակարգերի թերություններով և անկատարություններով, ինչի հետևանքով ընդերքի սեփականատերը՝ Հայաստանի Հանրապետությունը յուրաքանչյուր տարի կորցնում է (կամ չի ստանում) պետական բյուջեի մուտքերի զգալի մեծություն:

Ներկայում ՀՀ օրենսդրությամբ բնօգտագործման և շրջակա միջավայրի պահպանության ոլորտի տնտեսական կառուցակարգի կիրառման սկզբունքները և կառուցվածքը համակողմանիորեն չի կարգավորված: Գոյություն ունեցող գործիքներից ՀՀ բնապահպանական օրենսդրությամբ կիրառվում են միայն (1) բնօգտագործման և շրջակա միջավայրի պահպանության ֆինանսավորումը, և (2)

---

<sup>12</sup> “Привлечение иностранных инвестиций в горнодобывающую промышленность Российской Федерации”. Финансово-экономическое исследование и рекомендации для Правительства РФ, подготовленные в рамках работы Консультативного совета по иностранным инвестициям Российской Федерации. с. 79. Ссылка на электронный ресурс: [http://kinrossgold.ru/wordpress/wp-content/uploads/2016/07/kinross\\_RUS.pdf](http://kinrossgold.ru/wordpress/wp-content/uploads/2016/07/kinross_RUS.pdf)

<sup>13</sup> Ուսումնասիրվող հիմնախնդրի մասին ավելի մանրամասն տե՛ս Մկրտչյան Զ. «Օտարերկրյա ներդրումների ներգրավման հիմնախնդիրները ՀՀ հանքարդյունաբերության ոլորտում», «Այլընտրանք» գիտական հանդես, №2, 2018 թ., ապրիլ-հունիս, էջ 261-266:

բնապահպանական հարկերը և բնօգտագործման վճարները, որոնց արդյունավետությունը շրջակա միջավայրի պահպանության և դրա որակի բարելավման համատեքստում շարունակում է մնալ անբավարար: Նման վիճակը, ի թիվս այլ գործոնների, պայմանավորված է ազգային օրենսդրության մեջ տնտեսական կառուցակարգին բնորոշ «բումերանգի էֆեկտի»<sup>14</sup> խիստ թույլ արտահայտվածությամբ, ինչպես նաև շրջակա միջավայրի պահպանության տարբեր գործիքների միջև համակարգային կապի բացակայությամբ<sup>15</sup>:

Ատենախոսության երկրորդ «Հանքագործական արդյունաբերության զարգացման արդի տնտեսա-էկոլոգիական առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում» գլխում ներկայացվել են հանքագործական արդյունաբերության զարգացման հումքային բազան և բնութագրվել է դրա օգտագործման վիճակը, վերլուծվել են ՀՀ-ում հանքագործական արդյունաբերության զարգացումը բնութագրող հիմնական ցուցանիշները, ընդերքօգտագործման ոլորտում հարկազանձման ընդունված պրակտիկան: Հեղինակն ուսումնասիրել է նաև ՀՀ-ում ընդերքօգտագործման և հանքագործական արդյունաբերության զարգացման սոցիալական ու էկոլոգիական ռիսկերը:

Հայաստանի Հանրապետությունը հարուստ է ինչպես ոչ մետաղական, այնպես էլ մետաղական օգտակար հանածոների պաշարներով, որոնց կազմի, աշխարհագրական տեղաբաշխման, օգտագործման, ինչպես նաև տնտեսա-էկոլոգիական հիմնախնդիրների ու դրանց կառուցակարգերի կատարելագործման հարցերը գտնվում են հետազոտողների ուշադրության կենտրոնում<sup>16</sup>: Ինչ վերաբերում է հանքահումքային առանձին տեսակների գծով աշխարհում զբաղեցրած տեղին, ապա Հայաստանը առաջնային տեղերից մեկն է զբաղեցնում մի շարք մետաղական հանքահումքային ռեսուրսներով: Մասնավորապես, 2018թ.–ին՝ մոլիբդենի արտադրությամբ՝ 6-րդ տեղը, ռենիումի՝ 8-րդ տեղը, պղնձի՝ 25-րդ տեղը, արծաթի՝ 36-րդ, ցինկի՝ 45-րդ և ոսկու՝ 55-րդ տեղը<sup>17</sup>:

---

<sup>14</sup> Շրջակա միջավայրի պահպանության և բնօգտագործման ոլորտի տնտեսական կառուցակարգերի համատեքստում «բումերանգի էֆեկտ» արտահայտությունն օգտագործվում է այն իմաստով, որ շրջակա միջավայրի հանդեպ պատասխանատու վերաբերմունք դրսևորող տնտեսավարողը պետության կողմից խրախուսվում է հարկային կամ այլ արտոնությունների տրամադրման ձևով:

<sup>15</sup> Իսկոյան Ա.Բ., Գեղամյան Օ.Մ., Գրիգորյան Հ.Ս. «Հայաստանի Հանրապետության էկոլոգիական իրավունք» ընդհանուր մաս, Եր., «Հայրապետ» հրատ., 2020թ., էջ 350-351:

<sup>16</sup> Տե՛ս, մասնավորապես, Ավագյան Հ. Ս. Հայաստանի հանքահումքային ռեսուրսները, Երևան, «ՀՀ ԳԱԱ «Գիտություն»», 2004թ., 430 էջ, Ավագյան Ա.Ռ. Հայաստանի Հանրապետության ընդերքի ռեսուրսների աշխարհագրական գնահատականը, Երևան, «Երևանի համալսարանի հրատարակչություն», 2000թ., 170 էջ, Անդրոյան Դ.Ա. ՀՀ ընդերքի արդյունավետ յուրացման տնտեսական մեխանիզմների կատարելագործման ուղիները, Ը.00.02- «Տնտեսության, նրա ճյուղերի տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Եր., 2003թ., 145 էջ, Անդրոյան Դ.Ա. ՀՀ ընդերքի արդյունավետ յուրացման տնտեսական մեխանիզմների կատարելագործման ուղիները, Ը.00.02- «Տնտեսության, նրա ճյուղերի տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Եր., 2003թ., 20 էջ, ինչպես նաև սույն աշխատության հեղինակի հրապարակումները:

<sup>17</sup> World Mining Data, Volume 35, C. Reichl, M. Schatz, Minerals Production, Vienna, 2020, «Share of World Mineral Production 2018, by Countries», էջ 153-196-ի տվյալներով: Հղումը՝ [https://www.world-mining-data.info/?World\\_Mining\\_Data\\_Data\\_Section](https://www.world-mining-data.info/?World_Mining_Data_Data_Section)

Մետաղական օգտակար հանածոների գծով ներկայումս շահագործվող բոլոր հանքավայրերը՝ պղնձամոլիբդենային, պղինձ-հրաքարային, ոսկի-բազմամետաղային, ոսկի-սուլֆադային կազմավորման բոլոր հանքավայրերը շահագործվում են շատ ցածր արդյունավետությամբ, բոլոր մետաղական հանքավայրերը շահագործվում են բաց և պայթեցման եղանակով, ինչի արդյունքում աղտոտվում են ՀՀ ջրային և հողային ռեսուրսները, իսկ աղտոտման վնասները չեզոքացնելու նպատակով հանքարդյունահանող ընկերությունների կողմից պետական բյուջե վճարվող գումարները բավարար չեն անգամ նվազագույն փոխհատուցումներ տրամադրելու համար:

Այնուամենայնիվ, Խորհրդային Միության կազմալուծումից հետո հանքարդյունաբերությունը Հայաստանի այն սակավաթիվ ոլորտներից էր, որը կարողացավ շարունակել իր գործունեությունը, իսկ այդ ժամանակահատվածից ի վեր Հայաստանի տնտեսության խոշոր ներդրումային ծրագրերի մի զգալի մասը իրականացվել է հանքարդյունաբերության ոլորտում:

Հատկապես վերջին 2-3 տարիների ընթացքում, ելնելով ընդերքօգտագործման արդյունավետության բարձրացման և ոլորտում պետական կառավարման որակի բարձրացման նկատառումներից, ՀՀ կառավարությունը զգալի ջանքեր է գործադրում և ծրագրեր է իրականացնում՝ այդ աշխատանքներում ընդգրկելով արտասահմանյան մեծ հեղինակություն ունեցող կառույցներ և կազմակերպություններ: Բավական է նշել, որ ՀՀ գործադիր իշխանությանն են ներկայացվել Հայաստանի Հանրապետության արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (ԱՃԹՆ) երկու ազգային զեկույցները, որոնցից առաջինը հրապարակվել է 2018թ. դեկտեմբերին և վերաբերում է 2016-2017թթ. ֆինանսական տարիների արդյունքների վերլուծությանը<sup>18</sup>, իսկ երկրորդը՝ 2020թ. սեպտեմբերին<sup>19</sup>: Ընդերքօգտագործման նկատմամբ նման հետաքրքրությունը պայմանավորված է ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման գործում այդ ոլորտի նշանակությամբ ինչպես ներկայումս, այնպես էլ առաջիկա տարիներին:

Ատենախոսության մեջ կատարված ուսումնասիրության տվյալները վկայում են, որ ՀՀ-ում 2019թ.-ին 1997թ.-ի համեմատությամբ եթե ամբողջ արդյունաբերությունն ավելացել է 822.5%-ով, ապա «Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում» ոլորտը աճել է 4009.0%-ով, ինչի արդյունքում այդ ոլորտի մասնաբաժինը 2019թ.-ին 1997թ.-ի համեմատ ամբողջ արդյունաբերության մեջ ավելացել է 13.6 տոկոսային կետով՝ 3.5%-ից հասնելով 17.1%-ի:

---

<sup>18</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետության արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (ԱՃԹՆ) զեկույցը 2016-2017թթ.» առաջին զեկույցը, EITI Հայաստան, դեկտեմբեր 2018թ.: 25.09.2020թ. դրությամբ հասանելի է <https://www.eiti.am/hy/annual-reports/2018/> կայքում

<sup>19</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետության արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (ԱՃԹՆ) 2018թ. զեկույց» երկրորդ զեկույցը, EITI Հայաստան, սեպտեմբեր 2020թ.: 25.09.2020թ. դրությամբ հասանելի է <https://www.eiti.am/hy/annual-reports/2020> կայքում:

Մշտական մտահոգության տեղիք են տալիս հանքերի արդյունաբերական շահագործման արդյունքում շրջակա միջավայրին հասցվող վնասները: Նման ռիսկերի նվազեցման գործիքները պետք է ներառեն բնական հանածոների արդյունահանումը սահմանափակող կանոնների խստացումը, արդյունահանող ընկերությունների կողմից բնությանը հասցված վնասի մեղմման և դրանց վերացման ֆինանսական երաշխիքների տրամադրումը, ժամանակակից տեխնոլոգիաների և մոնիտորինգի ու գնահատման համակարգերի կիրառումը: Հաշվի առնելով հանքարդյունաբերության ազդեցությունը ազդակիր համայնքների վրա, արդյունքի արդարացի բաշխման անհրաժեշտությունը, առաջնային խնդիրն է սոցիալական ռիսկերի մեղմումը:

Բնապահպանական և սոցիալական ռիսկերը մեղմելու համար միայն օրենքների և նորմատիվ իրավական ակտերի առկայությունը հաճախ բավարար չէ: Թեև 2014 թվականին ընդունված «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքը<sup>20</sup> այդ հարաբերությունները կանոնակարգող երկրորդ օրենքն է (որով նաև ուժը կորցրած ճանաչվեց նախկին՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» 1995 թվականի նոյեմբերի 20-ի ՀՀ օրենքը (ՀՕ-21)), սակայն բազմաթիվ հիմնախնդիրներ դեռևս մնում են չկանոնակարգված, մասնավորապես՝ (1) երրորդ անձանց պատճառած վնասների դեպքում հարաբերությունների հստակեցումը, (2) բնապահպանական միջոցառումների իրականացման (ներառյալ՝ ազդեցության մշտադիտարկման (մոնիթորինգի) ծրագրի) կատարման հսկողությունը, (3) ՇՄԱԳ-ի իրականացման գործընթացում ազդակիր համայնքների ներգրավվածությունը, ինչը թույլ կտա որոշ չափով չեզոքացնել հանքարդյունաբերական ծրագրերի շուրջ ծագող սոցիալական լարվածությունը:

Պետությունը պետք է զարգացնի կարգավորման և տեխնիկական փոխհատուցման իր կարողությունները: Վերջապես, ռիսկերի շուրջ խնդիրներ առաջանալու դեպքում (այդ թվում, թե ով պետք է դրանք կրի), անհրաժեշտ է ունենալ լուծման արդյունավետ կառուցակարգեր և ինստիտուտներ, ապահովագրական ֆոնդեր կամ բավարար մեծության բնապահպանական դրամագլուխ, որոնք թույլ կտան հաշվի առնել բոլոր կողմերի շահերն ու հնարավորին չափով հատուցել շրջակա միջավայրին և բնակչությանը հասցվող վնասները:

Ատենախոսության երրորդ՝ **«Հայաստանի հանրապետության հանքագործական արդյունաբերության ոլորտի հանքային ռենտայի ձևավորման և բաշխման բարելավման հիմնական ուղիները»** գլխում ներկայացվել են հանքագործական արդյունաբերության ոլորտում բնական ռեսուրսների օգտագործման համար ոռյալթիների կամ վճարների հաշվարկման մեթոդաբանությունը, ՀՀ հանքագործական արդյունաբերության ոլորտում հանքային ռենտայի ձևավորումը և դրա մեծության հաշվարկը, ինչպես նաև

---

<sup>20</sup> «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքը, ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2014 թվականի հունիսի 21-ին, ՀՕ-110-Ն, Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգի պաշտոնական [www.arlis.am](http://www.arlis.am) կայք:

առաջարկվել են այդ ոլորտում հանքային ռենտայի ձևավորման և հարկազանձման բարելավման ուղիները:

Պետք է նշել, որ երկրների կառավարությունները յուրովի են լուծում հանքարդյունաբերության ոլորտի ընկերությունների հարկման խնդիրները, ինչի արդյունքում կարելի է առանձնացնել ռոյալթիների սահմանման 50 և ավելի եղանակ (տեսակ), որոնք կիրառվում են հանքարդյունահանող ընկերությունների համար: Հաշվարկման առանձնահատկություններից ելնելով տարբերում են՝ միավորի հիման վրա հաշվարկվող (unit-based royalties), արժեքի վրա հիմնված ռոյալթիներ (value-based royalties), շահույթի վրա հիմնված և եկամտի վրա հիմնված ռոյալթիներ (profit-based and income-based royalties) և խառնածին (հիբրիդ) համակարգեր (hybrid systems)<sup>21</sup>, որոնցից յուրաքանչյուրի կիրառման դեպքերը սահմանվում են ազգային օրենսդրությամբ:

Ընդհանրացնելով, հեղինակը նշում է, որ հանքարդյունաբերության մեջ ռոյալթիները ընդերքի սեփականատիրոջը ակտիվի սպառման համար վճարվող փոխհատուցումն է, և իդեալական դեպքում այն պետք է հաշվի առնի ապրանքների (օգտակար հանածոների) իրական արժեքը՝ հանած արդյունահանման, վերամշակման և մինչև վաճառքի վայրը տեղափոխման ծախսերը: Ռոյալթիների սահմանման ժամանակ պետք է հաշվի առնվեն ներդրված կապիտալի դիմաց խելամիտ շահույթ ստանալու և հիմնական միջոցների մաշվածությունը փոխհատուցելու ծախսերը: Այլ կերպ ասած, մասնագետների կարծիքով, ռոյալթիները ռենտայի հայեցակարգի հետ պետք է առնչություն ունենան: Սակայն գործնականում որոշակի խնդիրներ են առաջանում ռեսուրսների գնահատման և վերահսկողության հետ կապված, այդ պատճառով էլ բազմաթիվ երկրների կառավարություններ որոշում են կայացնում ռոյալթիների պարզ ձևերի կիրառման օգտին, որոնց հիմքում հիմնականում դրվում է շահութաբերությունը կամ եկամտաբերությունը՝ հանած ընդունելի համարվող ծախսերը: Այդ մեթոդաբանությունները, սակայն հաշվի չեն առնում հանքարդյունահանող ընկերությունների կողմից ներդրված կապիտալի համար շահութաբերության նորման:

ՀՀ օրենսդրությամբ ռոյալթիները չեն կարող 4%-ից ցածր լինել, միևնույն ժամանակ, ռոյալթիների հաշվարկման համար հիմք հանդիսացող շահույթից նվազեցումների տեսականորեն բացակայության դեպքում հարկը չի կարող լինել 16.5%-ից ավելի բարձր: Վերջին ցուցանիշը նույնիսկ ավելի բարձր է, քան Կանադայում կամ զարգացած տնտեսությամբ այլ երկրներում կիրառվող դրույքաչափերը, սակայն պետք է նշենք նաև, որ այդպիսի իրավիճակը իրատեսական չէ: Եթե ավելի իրատեսական օրինակ դիտարկենք, հանքարդյունահանող ընկերության շահութաբերության ցուցանիշը կանխատեսելով 10%-ից 20%-ի չափով, ապա կստանանք ռոյալթիների դրույքաչափեր՝ համապատասխանաբար 5.25% և 6.5% չափով, ինչը մոտավորապես հավասար է Ռուսաստանի Դաշնությունում կամ Ղազախստանում կիրառվող ռոյալթիներին:

<sup>21</sup> Նույն տեղում, էջ 50-55:

Սակայն ընկերությունների հաշվետվություններում շահութաբերության այդպիսի մակարդակ միշտ չէ, որ «ցուցադրվում» է: Միջազգային պրակտիկայից կարող ենք տեսնել, որ հանքարդյունահանող ընկերությունների արտադրանքը գերազանցապես վաճառվում է օֆշորային ընկերություններին, որոնք իրենց հերթին սեփական վերադիրով արտադրանքը վաճառում են վերջնական սպառողներին: Այսպիսով, շահույթի մեծ մասը ձևավորվում է, իսկ ավելի ճիշտ՝ ցույց է տրվում, օֆշորային գոտում գրանցված ընկերությունների կողմից, ինչը նշանակում է, որ թեև արդյունահանող ընկերությունները պետական բյուջե են վճարում երկրի օրենսդրությամբ նախատեսված հարկեր, սակայն դրանք կարող են զգալիորեն ավելի լինել, եթե գանձվեն ելնելով հանքահումքային արդյունաբերության արտադրանքը վերջնական սպառողներին իրացնող կազմակերպությունների իրացման ծավալներից:

Այնուամենայնիվ, այդպիսի հնարավորության դեմ պայքարելու համար օրենքով նախատեսված է դրույթ, որը վերաբերում է միջազգային գների նկատմամբ 80%-ի չափով սահմանափակմանը: Այսպիսով, հանքարդյունահանող ընկերությունները կարող են հանքանյութ (հանքաքար) վաճառել տվյալ ժամանակահատվածում ձևավորված շուկայական գներից ոչ ավելի, քան 20%-անոց զեղչով: Այդպիսի սահմանափակումների պարագայում ընկերությունները կարող են վնասով աշխատելու գայթակղություն ունենալ՝ իրենց արտադրանքը վաճառելով շուկայական գներից ցածր գներով, դրանով իսկ պետական բյուջե վճարելով ոռյալթիներ՝ նվազագույն 4%-ի չափով: Հայաստանի Հանրապետության պարագայում անհրաժեշտ է նկատի ունենալ, որ հանքահումքային արտադրանքը երկրի արտահանման ընդհանուր ծավալում նշանակալի մաս է կազմում՝ 2014-2020թթ.-ին միջին տարեկան հաշվարկով 28.6%, որը ԱԱՀ-ով չի հարկվում: Իսկ առանձին տարիների համար պատկերը հետևյալն է՝ 2014թ.-ին՝ 24.9%, 2015թ.-ին՝ 31.1% 2016թ.-ին՝ 26.3%, 2017թ.-ին՝ 30.9%, 2018թ.-ին՝ 26.7%<sup>22</sup>, 2019թ.-ին՝ 28.0%, իսկ 2020թ.-ին՝ 32.5%<sup>23</sup>: Պատկերն առավել ամբողջական դարձնելու և հանքահումքային արտադրանքի արտահանման չափերի բացարձակ մեծությունները պատկերացնելու համար նկատենք, որ 2019թ. ՀՀ-ից արտահանված հանքահումքային արտադրանքի ծավալը կազմել է 742 960.9 հազ. ԱՄՆ դոլար, իսկ 2020թ.՝ 828 075.4 հազ. ԱՄՆ դոլար<sup>24</sup>:

Այսպիսով, ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների էական ավելացման նպատակով անհրաժեշտ է հանքագործական ընկերությունների համար նախատեսել հանքահումքային ռեսուրսների (հիմնականում մետաղական հանքաքարի) արդյունահանումից ստացված լրացուցիչ եկամուտներից հարկ, ինչպես նաև փոփոխություններ կատարել մետաղական հանքաքարի արտահանման մաքսատուրքերի սահմանման ու հսկողության ոլորտում:

<sup>22</sup> Հաշվարկվել է ՀՀ վիճակագրական կոմիտեի հրապարակած տվյալների հիման վրա, [www.armstat.am](http://www.armstat.am)

<sup>23</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2020 թվականի հունվար-դեկտեմբերին», Եր., ՀՀ ՎԿ, 2021թ., էջ 140:

<sup>24</sup> Նույն տեղում, էջ 140:

Ինչ վերաբերում է մետաղական հանքաքարի արդյունահանումից ստացված լրացուցիչ եկամուտների հարկին, ապա նախատեսվում է ավելացնել դրա դրույքաչափը այնքան, որպեսզի ապահովվի այդ հարկատեսակը ներդնելու ժամանակ պետության կողմից ծրագրավորված լրացուցիչ հարկային եկամուտների ավելացումը:

Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ մետաղական հանքաքար արդյունահանող ընկերությունները սկզբունքորեն կարող են չհամաձայնվել առաջարկվող քաղաքականության հետ: Նրանց կարծիքով այդպիսի քաղաքականությունը կարող է հանգեցնել մետաղական հանքաքարի արդյունահանման ծավալների նվազեցմանը և ՀՀ պետական բյուջեի եկամուտների կրճատմանը: Սակայն երկրի ֆինանսական իշխանությունները պետական բյուջեի պակասուրդի, ինչպես նաև պետական պարտքի կտրուկ ավելացման պարագայում մետաղական հանքահումքից ստացվելիք հարկերի ավելացման այլընտրանք չունեն:

Ստացվում է ստանդարտ իրավիճակ, երբ անհրաժեշտություն է առաջանում զուգակցել ընթացիկ և հեռանկարային ծրագրերն այնպես, որպեսզի դրանք ոչ թե հակադրվեն միմյանց, այլ ապահովեն առավելագույն արդյունք: Մետաղական հանքահումքի արդյունահանումից ստացված լրացուցիչ եկամուտների հարկի ներդրումը հարկային ոլորտում հնարավորություն կստեղծի առավել արդար եղանակով բաշխել ոլորտում ստեղծվող հանքային ռենտան պետության՝ որպես ընդերքի սեփականատիրոջ և ընդերքօգտագործողների միջև:

Հանքագործական արդյունաբերության արդի տնտեսա-էկոլոգիական հիմնախնդիրների ուսումնասիրությունը և դրանց լուծումների վերաբերյալ առաջարկությունները թույլ են տալիս կատարել հետևյալ **եզրակացությունները**, որոնց բովանդակությունը հիմնականում կայանում է հետևյալում՝

1. Միջազգային համադրություններում (Համաշխարհային բանկի, Արժույթի միջազգային հիմնադրամի և այլ կազմակերպությունների կողմից) երկրների տնտեսությունների զարգացման հիմնական ցուցանիշների շարքում հաշվարկվում է նաև հանքային ռենտան՝ որպես արդյունահանված օգտակար հանածոների համաշխարհային գներով արտադրության արժեքի և դրանց արտադրության ընդհանուր ծախսերի միջև տարբերություն: Հաշվարկի հիմքում դրված են մետաղական հանքանյութերը՝ անագ, ոսկի, կապար, ցինկ, երկաթ, պղինձ, արծաթ և այլն:

2. Աշխարհի գրեթե բոլոր երկրների համար հաշվարկվող հանքային ռենտայի ցուցանիշները նպատակ ունեն ցույց տալ բնական ռեսուրսների ներդրումը (ավանդը) երկրի արդյունաբերական արտադրանքի մեջ: Ազգերի հարստությունը բնութագրող զեկույցում բնական ռեսուրսները դիտարկվում են որպես ազգային հարստության բաղադրիչներից մեկը և սահմանված մեթոդաբանությամբ գնահատումից (հաշվարկումից) հետո ներառվում են երկրի ազգային հարստության կազմում:

Հանքային ռենտայի հաշվարկումը կարևոր է տնտեսական արդյունքի (արտադրության) մեջ բնական ռեսուրսների ներդրման չափերի որոշման, ինչպես



նաև երկրների և առանձին տարածաշրջանների (մեզանում՝ մարզերի) կայուն զարգացման վերլուծական դաշտի ստեղծման տեսանկյունից:

3. 2018թ.-ի տվյալներով դասակարգված ՀՆԱ-ի նկատմամբ հանքային ռենտայի ամենամեծ ցուցանիշներ ունեցող 25 և ամենափոքր ցուցանիշներ ունեցող 10 երկրների 1970-2018 թվականների տվյալների ուսումնասիրությունը վկայում է, որ հանքային ռենտայի ցուցանիշով 2015-2018թթ.-ին առաջատարն է եղել Մոնղոլիան, որտեղ 2018թ.-ին հանքային ռենտան կազմել է ՀՆԱ-ի 28.88%-ը, իսկ ուսումնասիրվող ժամանակահատվածի համար կազմված երկրների շարքում մեծամասնությունը զարգացող կամ զարգացման ցածր մակարդակ ունեցող երկրներ են: Ընդ որում, առաջին 25 երկրների կազմում կան նախկին Խորհրդային Միության հետևյալ երկրները՝ Ղրղզստանը (11.18%), Ուզբեկստանը (7.37%), Հայաստանը (6.32%), Տաջիկստանը (4.92%) և Ղազախստանը (4.18%):

4. Երկրների տարբեր խմբավորումների (ՏՀԶԿ, Եվրամիություն, նախկին ԽՍՀՄ, ԵԱՏՄ և այլ) համար հանքային ռենտայի ամփոփ ցուցանիշները վկայում են, որ 2018թ.-ին աշխարհի բոլոր երկրների հանքային ռենտայի միջին ցուցանիշը կազմել է 2.07%, ամենաբարձր ցուցանիշներ ունեցող 25 երկրների միջինը՝ 10.23%, ինչը հինգ անգամ գերազանցում է աշխարհի բոլոր երկրների միջին ցուցանիշը: Միևնույն ժամանակ, ՏՀԶԿ և Եվրամիության երկրներում հանքային ռենտան ՀՆԱ-ի նկատմամբ կազմում է բավականին փոքր ցուցանիշ՝ համապատասխանաբար 0.63% և 0.08%: Օրինաչափությունը կայանում է նրանում, որ նշված տնտեսական միավորումների մեջ մտնող զարգացած, բարձր շնչային եկամուտներով երկրները հանքահումքային ռեսուրսների արդյունահանման և դրանց վաճառքի հաշվին տնտեսական զարգացման ցուցանիշների բարելավմամբ առանձնապես մտահոգված չեն: Նույնը չի կարելի ասել նախկին Խորհրդային Միության և ներկայիս ԵԱՏՄ մեջ մտնող երկրների մասին, որոնց միջինացված ցուցանիշները 2018 թ.-ի համար կազմել են համապատասխանաբար՝ 3.75% և 4.54%:

5. ՀՀ ՀՆԱ-ի և հանքային ռենտայի ցուցանիշների հավելաճերի հիման վրա հաշվարկվող համեմատական արդյունավետության գործակիցները (դրանք հաշվարկվել են համապատասխան տարվա ՀՆԱ-ի հավելաճի տեմպը հարաբերելով նույն տարվա հանքային ռենտայի հավելաճի տեմպին) ցույց են տալիս, որ եթե դրանք 2000-2008թթ. կազմել են 0.28 (ընդ որում՝ ՀՆԱ-ի հավելաճի տեմպը՝ 509.94%, իսկ հանքային ռենտայի հավելաճի տեմպը՝ 1837.45%), 2009-2018 թթ.-ին համապատասխանաբար՝ 0.07 (43.71% և 588.45%), 1995-2018թթ.՝ 0.07 (677.24% և 9531.63%), իսկ 2000-2018թթ.՝ 0.05 (550.0% և 11982.35%): Կամ, այլ կերպ ասած, հանքային ռենտայի հավելաճի տեմպը ՀՆԱ-ի հավելաճի տեմպին գերազանցել է համապատասխանաբար՝ 2000-2008թթ.-ին՝ 3.6 անգամ, 2009-2018թթ.-ին՝ 13.5 անգամ, 1995-2018թթ.-ին՝ 14.1 անգամ, իսկ 2000-2018թթ.-ին՝ 21.8 անգամ:

ՀՀ-ում հանքային ռենտայի և հարկեր/ՀՆԱ ցուցանիշների հավելաճերի համեմատական արդյունավետության գործակիցները վկայում են, որ եթե դրանք 2000-2008թթ. կազմել են 0.34 (ընդ որում՝ հարկերի հավելաճի տեմպը՝ 633.6%, իսկ հանքային ռենտայի հավելաճի տեմպը՝ 1837.45%), 2009-2018թթ.-ին

համապատասխանաբար՝ 0.13 (78.8% և 588.4%), 1995-2018թթ.՝ 0.22 (1849.5% և 8260.2%), իսկ 2000-2018թթ.՝ 0.07 (839.9% և 11982.4%): Կամ, այլ կերպ ասած, հանքային ռենտայի հավելածի տեմպը հարկերի հավելածի տեմպին գերազանցել է համապատասխանաբար՝ 2000-2008թթ.–ին՝ 2.9 անգամ, 2009-2018թթ.–ին՝ 7.5 անգամ, 1995-2018թթ.–ին՝ 4.5 անգամ, իսկ 2000-2018թթ.–ին՝ 14.3 անգամ:

6. ՀՀ ՀՆԱ-ի և օտարերկրյա ուղղակի ներդրումների (ՕՈՒՆ) հոսքերի (ներառյալ՝ հանքարդյունաբերությունում) ցուցանիշների հավելածների հիման վրա հաշվարկված համեմատական արդյունավետության գործակիցների տվյալների ուսումնասիրությունից հետևում է, որ 1998-2013թթ. ՀՀ ՀՆԱ-ի մեծության նկատմամբ ՕՈՒՆ հոսքերը կազմել են 6.1% ( $6030.8 / 98469.0 \times 100$ ), հանքագործական արդյունաբերության ոլորտում ՕՈՒՆ հոսքերը ՀՆԱ-ի նկատմամբ՝ 0.8% ( $743.6 / 98469.0 \times 100$ ), իսկ օտարերկրյա ուղղակի ներդրումների հոսքերի կազմում հանքագործական արդյունաբերության ոլորտում կատարված ուղղակի ներդրումների հոսքերը կազմել են 12.3% ( $743.6 / 6030.8 \times 100$ ): 2014-2019 թթ. ՕՈՒՆ զուտ հոսքերի ընդամենը մեծությունը այդ թվականների ՀՆԱ-ի մեծության նկատմամբ կազմել է 1.6% ( $544,267.6 / 33,090,112.4 \times 100$ ), հանքագործական արդյունաբերության ոլորտում ՕՈՒՆ զուտ հոսքերը ՀՆԱ-ի նկատմամբ՝ 0.6% ( $205,432.1 / 33,090,112.4 \times 100$ ), իսկ օտարերկրյա ուղղակի ներդրումները հանքագործական արդյունաբերության մեջ կազմել են ընդամենը ներդրումների 37.7%-ը ( $205,432.1 / 544,267.6 \times 100$ ): Այսինքն ակնհայտ է, որ 2014-2019թթ. ՀՀ-ում իրականացված օտարերկրյա ուղղակի ներդրումների զուտ հոսքերի զգալի մասը կատարվել է հանքագործական արդյունաբերությունում, որը մեր ուսումնասիրության համար ընտրված նախորդ ժամանակահատվածում (1998-2013 թթ.) իրականացված ՕՈՒՆ հոսքերին գերազանցում է 25.4 տոկոսային կետով (37.7%-12.3%):

7. Հանքարդյունաբերական նախագծերի իրականացումը ուղեկցվում է բնապահպանական և սոցիալական ինչպես դրական, այնպես էլ բացասական ազդեցություններով, որոնք բազմաթիվ են և բազմաշերտ: Ընդ որում, այդ ազդեցությունները կարող են լինել շոշափելի (աղտոտվածություն, կենսաբազմազանության կորուստ, առողջապահական ծառայությունների բարելավված հասանելիություն, ավելի լավ կենսապայմաններ, մատչելի անշարժ գույքի պակաս) կամ ոչ շոշափելի (հոգեկան սթրես՝ պայմանավորված շրջակա միջավայրի շարունակական աղտոտմամբ կամ ազդակիր համայնք(ներ)ում սոցիալական ներդաշնակության նվազմամբ):

8. Հանքարդյունաբերության ոլորտում, հատկապես խոշոր ներդրումային ծրագրերի իրագործման համար, կարևոր են ոչ միայն տնտեսական, այլև էկոլոգիական և սոցիալական ազդեցությունները նկատի ունենալը: Այդ պատճառով էլ նույնիսկ գրավիչ ներդրումային ծրագրերը ոչ միանշանակ արձագանքների են արժանանում բնակչության կողմից՝ առաջին հերթին այն պատճառով, որ դրանց իրագործման արդյունքում ի հայտ են գալիս բազմաթիվ էկոլոգիական և առողջապահական հիմնախնդիրներ: Նմանատիպ լավագույն օրինակներից է Ամուլսարի հանքավայրի շահագործման ծրագիրը, որը թեև խոստանում է

լավագույն տնտեսական ցուցանիշների արձանագրում՝ 3 մլրդ ԱՄՆ դոլարի եկամուտների չափով, սակայն զրոտ բնապահպանական չուծված խնդրների պատճառով դարձել է վերջին երկու-երեք տարիների հանրային դժգոհության առարկան, ինչի հետևանքով հանքավայրը չի շահագործվում:

9. Հայաստանի Հանրապետությունը հարուստ է ինչպես ոչ մետաղական, այնպես էլ մետաղական օգտակար հանածոների պաշարներով, իսկ հանքահումքային առանձին տեսակների գծով (մոլիբդեն, պղինձ, ոսկի, ցինկ, ոսկի, արծաթ, պեռլիտ և այլն) աշխարհում զբաղեցնում է առաջնային տեղեր: Անհրաժեշտ է նկատել, որ մեկ բնակչի հաշվով Հայաստանի Հանրապետությունը «գունավոր մետաղներ» ապրանքային խմբի ցուցանիշով, եթե համաշխարհային ցուցանիշը կշռային մեծությամբ գերազանցում է 1.9 անգամ (25.71 կգ / 13.42 կգ), ապա արժեքային արտահայտությամբ՝ 3.7 անգամ (159.4 ԱՄՆ դոլար / 43.07 ԱՄՆ դոլար), թանկարժեք մետաղների հաշվով արժեքային ցուցանիշը կազմում է 3.24 անգամ (70.70 ԱՄՆ դոլար / 21.81 ԱՄՆ դոլար): Եթե աշխարհի մեկ բնակչի հաշվով ընդամենը համաշխարհային հումքի արտադրությունը կազմել է 2373.6 կգ, արժեքային արտահայտությամբ՝ 592.05 ԱՄՆ դոլար, ապա Հայաստանի Հանրապետությունում համապատասխանաբար՝ 108.04 կգ և 287.66 ԱՄՆ դոլար: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետությունը չունի հանքային վառելիք, և որպեսզի աշխարհում ու ՀՀ-ում հումքի արտադրությունը դարձվի համարելի (այսինքն՝ եթե բացառենք համաշխարհային հումքի արտադրությունից հանքային վառելիքի բաժինը), ապա կարող ենք արձանագրել, որ աշխարհի մեկ բնակչի հաշվով հումքի արտադրությունը 2018թ.-ին կազմել է 369.97 կգ (2373.6 - 2003.63 կգ), իսկ արժեքային արտահայտությամբ՝ 130.72 ԱՄՆ դոլար (592.05 - 461.33): Այսպիսով, ապահովելով ցուցանիշների համադրելիությունը, ստացվում է, որ աշխարհի համեմատությամբ ՀՀ-ում մեկ բնակչի հաշվով հումքի արտադրությունը 2.2 անգամ (287.66 ԱՄՆ դոլար / 130.72 ԱՄՆ դոլար) ավելի է:

10. Հանքագործական արդյունաբերությունը հանդիսանում է ՀՀ արդյունաբերության գլխավոր ոլորտներից մեկը և վերջինիս (ներառյալ՝ էներգետիկայի) հիմնական ցուցանիշները բնութագրվում են հետևյալ տվյալներով. մասնաբաժինն ավելացված արժեքում (առանց ուղղակի հարկերի) 2008թ.-ին կազմել է 14.7%, 2019թ.-ին՝ 20.4%: Հանքագործական արդյունաբերության արտադրանքը ինչպես ներմուծման, այնպես էլ արտահանման տեսանկյուններից Հայաստանի Հանրապետության համար դարձել է առաջնահերթ կարևորության ոլորտ, այն դուրս է եկել ազգային սահմաններից և դարձել համաշխարհային շուկայում, միջազգային առևտրում ներկայացված արտադրանք: Ավելին, եթե 2020թ.-ին ՀՀ արտաքին առևտրաշրջանառության համեմատական առավելության գործակիցը (ՀԱԳ) կազմել է -0.284, ապա հանքահումքային արտադրանքի առևտրաշրջանառության ՀԱԳ-ը՝ 0.053, ինչը վկայում է այս ապրանքային խմբի համաշխարհային շուկայում մրցունակության մասին:

11. Ելնելով ՀՀ տնտեսության համար հանքագործական արդյունաբերության բարձր տեսակարար կշռից, արտաքին առևտրում ունեցած կարևորությունից և

արտահանման կառուցվածքում բարձր տեսակարար կշռից, ՀՀ-ում հանքագործական արդյունաբերությունը առաջիկա 10-15 տարիների համար օրենքով անհրաժեշտ է ճանաչել որպես ռազմավարական ոլորտ և ՀՀ կառավարության կողմից պետք է ընդունվի այդ ոլորտի զարգացման ռազմավարությունը և առաջնահերթությունները՝ սահմանելով ոլորտի կառավարման ու ծրագրերի իրականացման առանձին օրենքներ, որոնց կատարման վերաբերյալ հաշվետվությունները նույնպես պետք է քննարկվեն և ընդունվեն ՀՀ Ազգային ժողովի կողմից:

12. ՀՀ-ում 1000 խոշոր հարկ վճարող կազմակերպությունների կողմից 2018-2020 ֆինանսական տարիների ընթացքում ՀՀ պետական բյուջե վճարված ընդհանուր հարկերի ուսումնասիրությունը վկայում է, որ 2018թ.-ին և 2019թ.-ին 9, իսկ 2020թ.-ին՝ 12 հանքարդյունահանող ընկերություններ գտնվել են խոշոր հարկատուների ցանկում, 2018թ.-ին ապահովելով 1000 խոշոր հարկատուների կողմից վճարված ընդամենը հարկերի 9.0%-ը (կամ 84.7 մլրդ դրամ), 2019 թ.-ին՝ 6.9%-ը (կամ 73.3 մլրդ դրամ), իսկ 2020թ.-ին՝ 8.0%-ը (կամ 78.6 մլրդ դրամ):

2019թ.-ին արդյունահանված մետաղական օգտակար հանածոների և դրանց վերամշակման արդյունքում ստացված արտադրանքի իրացման համար վճարվող ռոյալթին կազմել է 37.2 մլրդ դրամ: Առանց անցումային գերավճարի նշված մուտքը կազմել է 32.5 մլրդ դրամ, որը 17.4%-ով կամ 6.8 մլրդ դրամով զիջել է նախորդ տարվա ցուցանիշը:

13. Շատ հաճախ հանքարդյունահանող ընկերությունների անվերահսկելի գործունեությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ նրանք չեն իրականացնում առաջավոր տեխնոլոգիաների և սարքավորումների ձեռքբերման և ներդրման ծախսեր (կամ դրանք իրականացնում են ոչ բավարար չափով), ինչը թույլ կտա նվազեցնել հանքարդյունաբերության վնասակար ազդեցությունը բնակչության և շրջակա միջավայրի վրա: Հանքավայրերի անվերահսկելի ջրերը, որոնք լցվում են գետերի մեջ և աղտոտում դրանք, պետք է հավաքվեն և մաքրվեն, ինչպես նաև պետք է համարժեք գնահատվի ազդակիր համայնքներին հասցվող վնասը: Հանքավայրերը վաղ թե ուշ սպառվում են, օգտակար հանածոները սպառվող ռեսուրս են, սակայն հողը աղտոտվում է ընդմիջտ, ուստի և անուղղելի վնաս է հասցվում երկրի հիմնական բնական ռեսուրսներին և գենոֆոնդին: Այդ պատճառով էլ նպատակահարմար է հանքագործական արդյունաբերության ընկերությունների կողմից շրջակա միջավայրին և ազդակիր համայնքներին հասցված վնասի մեծությունները գնահատել ու ներառել իրացվող արտադրանքի արժեքում, որից էլ համապատասխան մասհանումներ կկատարվեն պատճառած վնասակար ազդեցությունների նվազեցման և ռիսկերի չեզոքացման համար:

14. Հանքագործական արդյունաբերության ոլորտում ռոյալթիների սահմանման նպատակը, դրույքաչափերը, հաշվարկման մեթոդաբանությունը ընտրվում և կիրառվում է ելնելով տարբեր մոտեցումներից ու սկզբունքներից (միավորի հիման վրա հաշվարկվող, արժեքի վրա հիմնված ռոյալթիներ, շահույթի վրա հիմնված և եկամտի վրա հիմնված ռոյալթիներ և խառնածին (հիբրիդ) համակարգեր), իսկ առանձին վերցրած երկրում այդ մեթոդաբանության

ընտրությունը կատարվում է ելնելով ոլորտում ներդրումային գրավչության կամ պետական բյուջեի եկամուտների ավելացման գերակայությունից և(կամ) այդ երկու նպատակների զուգակցման սկզբունքից:

15. Հանքարդյունաբերության ոլորտում գործունեություն ծավալող տնտեսավարող սուբյեկտները և պետական կառավարման համապատասխան մարմինները պետք է համատեղ պատասխանատվություն կրեն ոռոգիաների վճարման թափանցիկության համար, ինչը կնպաստի հանրության առջև հաշվետվողականության բարձրացմանը: Ընդհանուր նպատակը պետք է լինի այն, որ հանքարդյունաբերության ոլորտից ստացված եկամուտները նպաստեն երկրի սոցիալ-տնտեսական աճին և ունենան ներառական բնույթ: Հատկապես այդ եկամուտների հաշվետվողականության և թափանցիկության պակասը հաճախ սրում է վատ կառավարման հետ կապված խնդիրները, նպաստում է կոռուպցիայի զարգացմանը և աղքատության մակարդակի աճին: Միջազգայնորեն ընդունված են եկամուտների հաշվետվողականության ապահովման մի շարք սկզբունքներ, որոնցից լավագույնը արդյունահանող ոլորտների թափանցիկության նախաձեռնությունն է (ԱՃԹՆ, EITI):

16. Հանքագործական արդյունաբերության զարգացման գործում ներկայումս առկա են հետևյալ հիմնախնդիրները, որոնք առաջնահերթ լուծման կարիք ունեն՝

➤ հանքագործական արդյունաբերության զարգացման ծրագրերի մշակման ժամանակ բնապահպանական, սոցիալական և տնտեսական ռիսկերի կանխատեսման և գնահատման իրական համակարգի ստեղծումը,

➤ հանքագործական արդյունաբերության ոլորտի ներդրումային գրավչության ապահովումը,

➤ ոլորտում հանքային ռենտայի ձևավորման և դրա մեծության գնահատման ու բաշխման հաշվարկը,

➤ հանքային ռենտայի ազդեցությունը հարկեր/ՀՆԱ ցուցանիշի փոփոխության վրա:

17. Ուսումնասիրությունը վկայում է, որ ազգային հարստության ստեղծման գործում բնական ռեսուրսների բաղադրիչի կշիռը ՀՀ-ում թերաբժևորված է, հատկապես՝ պետական բյուջեի եկամուտների ավելացման գործում: Մասնավորապես, ՀՀ հանքագործական արդյունաբերության ոլորտում ստեղծված հանքային ռենտայի մասնաբաժնի տարբերության բացարձակ մեծությունը՝ դրամական արտահայտությամբ (օրինակ 2018թ.-ին՝ շուրջ 210.3 մլրդ դրամ) զգալի մեծություն է, սակայն չհարկվելով, պետական բյուջեն զրկվում է էական եկամուտներից: Ուստի անհրաժեշտ է հանքարդյունաբերության ոլորտում հարկազանձման կառուցակարգի և պրակտիկայի արմատական փոփոխման միջոցով վերացնել այդ բացը:

18. ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների էական ավելացման նպատակով առաջարկվում է նախատեսել հանքահումքային ռեսուրսների (հիմնականում մետաղական հանքաքարի արդյունահանման) հարկման դրույքաչափերի որոշակի ավելացում: Այդ նպատակով անհրաժեշտ է նախատեսել մետաղական հանքավայրեր շահագործող ընկերությունների հարկային բեռի

ավելացման գործիքներ: Փոփոխությունները պետք է վերաբերեն մետաղական հանքահումքի արդյունահանման հարկին, ինչպես նաև դրանց արդյունահանումից ստացված լրացուցիչ եկամուտների հարկի դրուքաչափին: Այդ նպատակով անհրաժեշտ է ՀՀ հարկային օրենսգրքում նախատեսել «մետաղական հանքաքահումքի արդյունահանումից ստացված լրացուցիչ եկամուտների հարկ»՝ որպես ուղղակի հարկատեսակ, որը հաշվարկվում է ընդերքի յուրաքանչյուր տեղամասից արդյունահանված մետաղական հանքաքարից ստացված լրացուցիչ եկամուտների նկատմամբ: Այն որոշվում է որպես ընդերքի այդ տեղամասից ստացված եկամուտների և ծախսերի դրական տարբերություն: Այս հարկատեսակը, մինչև լայնամասշտաբ կիրառումը, կարող է ներդրվել մեկ կամ մի քանի հանքավայրի համար՝ որպես փորձարարական ծրագիր, որի արդյունքների հիման վրա կմշակվեն համատարած ներդրման պայմանները:

Ատենախոսության հիմնական արդյունքներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. **Մկրտչյան Ջ.** «Օտարերկրյա ներդրումների ներգրավման հիմնախնդիրները ՀՀ հանքարդյունաբերության ոլորտում», «Այլընտրանք» գիտական հանդես, №2, ապրիլ-հունիս, 2018թ., էջ 261-267:

2. **Մարկոսյան Ա., Մկրտչյան Ջ.** «Հայաստանի Հանրապետության հանքագործական արդյունաբերության ոլորտում հանքային ռենտայի ձևավորման հիմնախնդիրը», «Հանրային կառավարում» գիտական հանդես, №2, 2020թ., էջ 122-135:

3. **Մկրտչյան Ջ.** «Հանքարդյունաբերության զարգացման տնտեսա-էկոլոգիական հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում և Արցախի Հանրապետությունում», «Գիտական Արցախ» №4 (7), 2020թ., էջ 144-154:

4. **Մկրտչյան Ջ.** «Հանքագործական արդյունաբերության ներդրումային գրավչության հիմնախնդիրները», «Այլընտրանք» գիտական հանդես, №4, հոկտեմբեր-դեկտեմբեր, 2020թ., էջ 155-167:

5. **Մկրտչյան Ջ.Շ.** «Հանքարդյունաբերության ոլորտում հարկազանձման արդի հիմնախնդիրները», «Տեղեկագիր բարձր տեխնոլոգիաների», №3 (14), 2020թ., էջ 84-94:

6. **Мкртчян З.Ш.** «Экономико-экологические аспекты развития горнодобывающей промышленности в Республике Армения», «Минерально-сырьевой комплекс: инженерные и экономические решения», Сборник материалов XVII Международной научно-практической конференции, БНТУ, Минск, 2020г, с. 378:

7. **Մկրտչյան Ջ.** «Հանքագործական արդյունաբերության ոլորտում հանքային ռենտայի ձևավորման և հարկազանձման բարելավման ուղիները», «Այլընտրանք» գիտական հանդես, №1, հունվար-մարտ, 2021թ., էջ 377-390:

**МКРТЧЯН ЗАВЕН ШМАВОНОВИЧ**

**ЭКОНОМИКО-ЭКОЛОГИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ РАЗВИТИЯ  
ГОРНОДОБЫВАЮЩЕЙ ПРОМЫШЛЕННОСТИ РЕСПУБЛИКИ  
АРМЕНИЯ**

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.02 – “Экономика, управление хозяйством и его отраслями”.

Защита диссертации состоится 9-ого июля 2021г. в 13:30, на заседании Специализированного совета 015 ВАК Республики Армения по экономике, действующего в Ереванском государственном университете, по адресу: 0009, г. Ереван, ул.Х.Абовяна 52

**Р Е З Ю М Е**

Современная парадигма социально-экономического развития Республики Армения должна быть основана на факторах производства (природных ресурсах, рабочей силе, капитале, предпринимательских навыках), благодаря использованию которых национальная экономика сможет обеспечить новые факторы роста, а также реализовать свои относительные преимущества в мировой торговле. Хотя наличие природных ресурсов в развитых экономиках не является основным фактором экономического роста, для таких стран как Армения эффективное использование минеральных ресурсов все еще является приоритетным условием для обеспечения устойчивого развития. Горнодобывающая промышленность Республики Армения является неотъемлемой частью ее экономического комплекса. Достаточно отметить, что если в 2019 году объем промышленного производства республики по сравнению с 1997 годом увеличился в 8,2 раза, то рост горнодобывающей промышленности составил более чем в 40 раз. Доля горнодобывающей промышленности в ВВП республики в 2020 году составила 6,5%, в доходах государственного бюджета, выплачиваемых организациями, входящими в список 1000 крупнейших налогоплательщиков - 8,0%, а доля в структуре экспорта составила 32,5%.

В современных условиях развития приоритетным становится расчет размера минеральной ренты, образующейся в горнодобывающей отрасли, а также вопрос распределения минеральной ренты между государством, как собственником недр, и коммерческими организациями, пользующимися недрами. Однако быстрое развитие горнодобывающей промышленности, особенно добычи металлических полезных ископаемых, влечет за собой нежелательные экологические последствия и риски, которым в основном подвергаются близлежащие территории (общины). Вышесказанным, а также многими другими факторами, обусловлена актуальность темы диссертации.

Целью диссертационной работы является исследование сырьевой базы горнодобывающей промышленности Республики Армения и экономико-экологических инструментов ее управления, выявление проблем

недропользования металлических месторождений, а также предложение путей повышения эффективности управления данной сферой экономики.

Для достижения поставленных в диссертации целей определены следующие задачи исследования:

- изучить экономическое содержание минеральной ренты и показатели, используемые для ее оценки в международных сравнениях,
- выявить факторы, влияющие на инвестиционную привлекательность горнодобывающей сферы;
- оценить экологическое и социальное воздействие горнодобывающей промышленности и экономический инструментарий ее регулирования;
- изучить сырьевую базу для развития горнодобывающей промышленности и состояние ее использования;
- изучить основные показатели, характеризующие развитие горнодобывающей промышленности в Республике Армения и тенденции изменения этих показателей;
- оценить социальные и экологические риски развития горнодобывающей промышленности в Республике Армения;
- изучить методологию расчета роялти или платежей за использование природных ресурсов в горнодобывающем секторе;
- представить пути улучшения расчета минеральной ренты в горнодобывающей промышленности Республики Армения;
- предоставить предложения о необходимости увеличения размера ренты за добычу полезных ископаемых в горнодобывающей промышленности и о налогообложении в данной отрасли.

Основные научные результаты исследования имеют теоретическое и практическое значение, научная новизна которых заключается в следующем:

1. Автор оспаривает распространенное мнение, согласно которому Республика Армения бедна минеральными ресурсами и не имеет перспектив развития, в то же время обосновано, что в ближайшие годы горнодобывающая промышленность продолжит играть значительную роль среди факторов экономического роста РА.

2. Выявлено, что темпы развития горнодобывающей промышленности, объемы экспорта и импорта не зависели от «экономической блокады» республики, а также ограничений, обусловленных COVID-19.

3. Рассчитан реальный размер роялти за извлечение металлических руд в Республике Армения, в результате чего обосновано, что собственник недр - Республика Армения - получает недостаточную долю от прибыли предприятий горнодобывающей промышленности.

4. Выявлены возможные пути совершенствования формирования минеральной ренты и улучшения практики сбора налогов в данной отрасли, а также представлены направления для улучшения управления в области взимания минеральной ренты, что, в свою очередь, окажет положительное экономико-экологическое воздействие.



**ZAVEN MKRTCHYAN**

**ECONOMIC AND ENVIRONMENTAL PROBLEMS OF MINING INDUSTRY  
DEVELOPMENT IN THE REPUBLIC OF ARMENIA**

The dissertation is submitted for pursuing of scientific degree of PhD of economic sciences in the field 08.00.02 “Economics, Management of the Economy and its Branches”

The defense of the dissertation will take place at 13:30, on July 9<sup>th</sup>, 2021, at the Meeting of the Specialized Council 015 in Economics of the Supreme Certifying Committee of the Republic of Armenia acting at the Yerevan State University, by address: 0009, Yerevan, 52 Abovyan st.

**ABSTRACT**

The modern paradigm of the socio-economic development of the Republic of Armenia should be based on production factors (natural resources, labor force, capital, entrepreneurial skills), through the use of which the national economy will be able to provide new growth factors, as well as realize its relative advantages in world trade. Although the availability of natural resources in developed economies is not a major factor in economic growth, for countries like Armenia the efficient use of mineral resources is still a priority condition for ensuring sustainable development. The mining industry of the Republic of Armenia is an integral part of its economic complex. Suffice it to note that if in 2019 the volume of industrial production of the republic increased 8.2 times compared to 1997, the growth of the mining industry was more than 40 times. The share of the mining industry in the republic's GDP in 2020 amounted to 6.5%, in the state budget revenues paid by organizations included in the list of 1000 largest taxpayers - 8.0%, and the share in the export structure was 32.5%.

In modern conditions of development, the priority is to calculate the amount of mineral rent generated in the mining industry, as well as the issue of the distribution of mineral rent between the state as the owner of the subsoil and commercial organizations that use the subsoil. However, the rapid development of the mining industry, especially the extraction of metallic minerals, entails undesirable environmental impacts and risks to which the surrounding territories (communities) are mainly exposed. The above, as well as many other factors, determine the relevance of the topic of the dissertation.

The purpose of the study is to study the raw material base of the mining industry of the Republic of Armenia and the economic and environmental instruments of its management, to identify the problem of subsoil use of metal deposits, as well as

to propose ways to improve the efficiency of management of this sphere of the economy.

In order to achieve the goals set in the dissertation, the following issues were addressed and resolved in the dissertation:

- to study the economic content of mineral rent and the indicators used to assess it in international comparisons,
- to identify the factors influencing the investment attractiveness of the mining industry;
- to assess the environmental and social impact of the mining industry and the economic tools for its regulation;
- to study the raw material base for the development of the mining industry and the state of its use;
- to study the main indicators characterizing the development of the mining industry in the Republic of Armenia and trends in these indicators;
- to assess the social and environmental risks of the development of the mining industry in the Republic of Armenia;
- analyzing the methodology for calculating royalties or payments for the use of natural resources in the mining sector;
- to present ways to improve the calculation of mineral rent in the mining industry of the Republic of Armenia;
- to submit proposals on the need to increase the rent for the extraction of minerals in the mining industry and on taxation in this industry.

The main scientific results of the research are of theoretical and practical importance, the scientific novelty of which is as follows:

1. The author disputes the widespread opinion that the Republic of Armenia is poor in mineral resources and has no development prospects, at the same time it is substantiated that in the coming years the mining industry will continue to play a significant role among the factors of economic growth in the Republic of Armenia.

2. It was revealed that the pace of development of the mining industry, the volume of exports and imports did not depend on the "economic blockade" of the republic, as well as restrictions due to COVID-19.

3. The actual amount of royalties for the extraction of metal ores in the Republic of Armenia was calculated, as a result of which it was substantiated that the owner of the subsoil, the Republic of Armenia, receives an insufficient share of the profits of the mining industry.

4. Identified possible ways of improving the formation of mineral rent and the practice of collecting taxes in mining industry are identified, and directions for

improving management in the field of collecting mineral rent are presented, which, in turn, will have a positive economic and environmental impact.

A handwritten signature in blue ink, consisting of stylized cursive letters, positioned centrally on the page.